ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀՐԱՏԱՊ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 25 նոյեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի նոյեմբերի 1-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» փոխառության համաձայնագրում

ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» փոխառության համաձայնագիրն ստորագրվել է 2011թ. նոյեմբերի 1-ին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2011թ. նոյեմբերի 17-ի թիվ 45-41 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել փոխառության համաձայնագրին:

Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի առաջին մասը՝ 30 մլն ԱՄՆ դոլարի չափով փոխառությամբ եւ 6.33 մլն ԱՄՆ դոլարի չափով ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ, ստորագրվել է 2009թ. հուլիսի 31-ին, իսկ նախատեսված ծրագրի կատարումն ավարտվել է 2011թ. հունիսի 30-ին:

2. «Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» փոխառության համաձայնագրի նպատակն է բարձրացնել ջրօգտագործման արդյունավետությունն ընտրված ոռոգման համակարգերում եւ նպաստել գյուղացիական անմիջական զբաղվածության ստեղծմանը, մասնավորապես.

- մեծացնել ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի ազդեցությունը ոռոգման համակարգերի զարգացման նկատմամբ,

- բավարարել ոռոգման կառուցվածքների վերականգնմանն օժանդակելու աղքատ գյուղացիների աճող պահանջարկը,

- շարունակել ստեղծել կարճաժամկետ զբաղվածության հնարավորություններ շինարարության բնագավառում,

- ապահովել երկարատեւ աշխատատեղերի առկայությունը գյուղատնտեսության բնագավառում,

- օգտագործել Հազարամյակի մարտահրավերների կորպորացիայի ծրագրի արդյունքներն օբյեկտների ուսումնասիրման եւ նախագծերի պատրաստման համար:

Վերոնշյալ ծրագրային աշխատանքներն ըստ համաձայնագրի թիվ 1 առդիրի՝ իրականացվելու են Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում:

Համաձայնագիրը բաղկացած է թվով երեք ժամանակացույցից եւ հավելվածից: Առաջին ժամանակացույցում նկարագրված՝ Ծրագրի ֆինանսավորմանն աջակցելու նպատակով Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է տասնութ միլիոն (18.000.000) ԱՄՆ դոլար՝ մինչեւ 2013թ. հունիսի 30-ը մարման պայմանով: Միաժամանակ, նախատեսված է տոկոսագումարի վճարում՝ համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.04-րդ, 2.05-րդ կետերում սահմանված կարգով եւ պայմաններով:

3. Փոխառության համաձայնագրի համաձայն Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

ա) վերադարձնել փոխառված գումարը համաձայնագրի 3-րդ առդիրով ամրագրված մարման ժամանակացույցի համաձայն,

բ) իրականացնել Ծրագիրը ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի միջոցով՝ Ընդհանուր պայմանների 5-րդ հոդվածի դրույթների համաձայն,

գ) ապահովել Ծրագրի իրականացումը Համաձայնագրի 2-րդ առդիրի դրույթներին համապատասխան, մասնավորապես.

- նշանակել ԾԻԳ-ին որպես գնումների պլանավորման, մոնիտորինգի եւ հաշվետվությունների, վճարումների կատարման եւ ներքին ֆինանսական հսկողության իրականացման, Ծրագրի հաշիվների վարման եւ Ծրագրի հաշվետվությունների պատրաստման պատասխանատու,

- ապահովել ԾԻԳ-ի համապատասխան աշխատակազմի եւ միջոցների մշտական առկայությունը՝ Ծրագրի իրականացման եւ կառավարման պարտականությունները կատարելու համար,

- մինչեւ Ծրագրի ավարտը պահպանել ՋՕԸ-ների օժանդակության խումբը,

- ապահովել տարեկան բյուջեում ոռոգման համակարգերի պատշաճ օգտագործման եւ պահպանման համար անհրաժեշտ միջոցների առկայությունը,

- ապահովել Ծրագրի դրույթների իրականացումը Հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթներին համապատասխան,

- Ծրագրի Ա եւ Բ մասերի համար կիրառել Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման ուսումնասիրության եւ Վերաբնակեցման քաղաքականության փաստաթղթում սահմանված չափորոշիչները, քաղաքականությունը, ընթացակարգերը,

- իրականացնել Ծրագրի առաջընթացի մոնիտորինգ ու գնահատում եւ պատրաստել Ծրագրի վերաբերյալ հաշվետվություններ՝ Ընդհանուր պայմանների 5.08 բաժնի դրույթներին համապատասխան,

- վարել ֆինանսական կառավարման համակարգ՝ Ընդհանուր պայմանների 5.09 բաժնի դրույթներին համապատասխան,

- Ծրագրի համար պահանջվող եւ փոխառության միջոցներից ֆինանսավորվելիք բոլոր աշխատանքները ձեռք բերել Գնումների ուղեցույցների 1-ին բաժնում ամրագրված կամ նշված պահանջների եւ Փոխառության համաձայնագրի 2-րդ առդիրի 3-րդ բաժնի դրույթներին համապատասխան,

- Ծրագրի համար պահանջվող եւ փոխառության միջոցներից ֆինանսավորվելիք բոլոր խորհրդատվական ծառայությունները ձեռք բերել Խորհրդատուների ուղեցույցների I եւ IV բաժիններում ամրագրված կամ նշված պահանջներին եւ Փոխառության համաձայնագրի 2-րդ առդիրի 3-րդ բաժնի դրույթներին համապատասխան եւ այլն.

դ) վճարել տոկոսներ փոխառության մասհանված մնացորդի համար համաձայնագրով սահմանված դրույքաչափերին եւ ժամկետներին համապատասխան,

ե) համաֆինանսավորել Ծրագրի Ա մասի շրջանակներում իրականացվող աշխատանքների, խորհրդատվական ծառայությունների, այդ թվում՝ ուսուցման, Լրացուցիչ գործառնական ծախսերի եւ աուդիտի 15 տոկոսը եւ Ծրագրի Բ մասի շրջանակներում իրականացվող աշխատանքների 24 տոկոսը:

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վավերացման ներքին ընթացակարգերն ավարտվելուց հետո, բայց ոչ ուշ, քան ստորագրման ամսաթվից հետո իններորդ օրը:

5. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ համաձայնագրի անգլերեն բնօրինակ տեքստի եւ հայերեն պաշտոնական թարգմանված տեքստի համեմատական ուսումնասիրությունը վկայում է, որ առկա են

մի շարք վրիպումներ, մասնավորապես՝ համաձայնագրի 4-րդ հոդվածում, 2-րդ առդիրում (1-ին բաժնի «Ա» կետի 1-ին ենթակետ, 2-րդ բաժնի «Ա» կետի 1-ին, 2-րդ կետեր, «Բ» կետի 2-րդ եւ 3-րդ ենթակետեր, 3-րդ բաժնի «Գնման մեթոդը» վերտառությամբ մասի «ա» կետի «i» ենթակետ, 4-րդ բաժնի «Ա» կետի 2-րդ ենթակետի աղյուսակի 1-ին կետ), հավելվածում (1-ին, 9-րդ եւ 21-րդ կետեր):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ վրիպումներն ու սխալները հանգեցնում են համաձայնագրի անգլերեն բնօրինակ տեքստի եւ հայերեն պաշտոնական թարգմանված տեքստի համապատասխան դրույթների տարընթերցման ու բովանդակային աղավաղման: Ու, թեեւ, դրանք համաձայնագրում ամրագրված ՀՀ պարտավորությունների սահմանադրականության խնդիր չեն հարուցում, սակայն ենթակա են շտկման:

6. ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի առաջին մասի իրականացման արդյունքում վերականգնվել է շուրջ 90 կմ ջրանցք, որից 36 կմ՝ Արագածոտնի մարզում եւ 54 կմ՝ Արմավիրի մարզում, հնարավոր է դարձել խնայել 97 մլն խմ ոռոգման ջուր, ոռոգելի տարածքների պոտենցիալ աճը կազմել է մոտ 8 հազար հա: Ծրագիրն ավարտվել է նախատեսված ժամկետներում:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ վարկային միջոցները նպատակ ունեն ոռոգման համակարգերի վերականգնման ու զարգացման ճանապարհով նպաստել գյուղատնտեսական արտադրության հետագա զարգացմանը, ՀՀ սահմանադրական դատարանը կարեւոր է համարում, որպեսզի նման վարկային պարտավորություն ստանձնելիս գնահատվի նաեւ տվյալ ձեռնարկի տնտեսական արդյունավետությունն ու վարկային միջոցների վերադարձնելիության հիմնավորվածությունը: Հակառակ դեպքում սերունդների վրա կթողնվեն չհիմնավորված պարտքեր, ինչը պատճառ կդառնա նրանց իրավունքների անհամաչափ սահմանափակման:

7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջեւ դրված սահմանադրաիրավական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի

առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի նոյեմբերի 1-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 նոյեմբերի 2011 թվականի
ՍԴՈ-999